

ԳՐԱԿԱՆ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ն Ի Կ Ո Գ Ի Մ Ո Ս *

(Գր. ֆ. Պետրովից)

Հայր Յովհաննէսը հէնց նոր էր ստացել պատուիրած գրքերը և նրանց թերթելով չէր իմացել թէ նստելու սովորական ժամանակը անց էր հացել: Արդէն ժամը մօտ տասն և մէկն էր: Տանը ջուտը քնած էին: Տէր-հայրը նոյնպէս պատրաստուած էր քնելու: Յանկարծ նախասենեակում զանգի ձայն լսուեց: Չայնը հնչեց ցած, կարծ և անվճռական, կարծես ասում լինէր. — Եթէ թողնէք՝ լաւ, իսկ եթէ չէ՛ ինչ արած: Ինքս գիտեմ որ զալս անժամանակ է:

Հայր Յովհաննէսը զարմացու և մի վոքը էլ անհանգստացաւ. — Մի բան չպատահեց արդեօք: Ծառաներին արթնացնել չէր ուզում: Նա ինքը գնաց նախասենեակ. դուռը բաց արաւ և աւելի՛ մեծ զարմանք պատեց նրան: Գրան առաջ կանգնած էր հոգեբուժական հիւանդանոցի տեսուչը՝ յայտնի գլխնականի անուն վայելող բժիշկ:

— Ներս կթողնէք արդեօք անժամանակ հիւրին, հարցրեց բժիշկը, չէք վռնդի:

— Խնդրեմ-ասաց հ. Յովհաննէսը, բաց անելով դուռը:

— Ներեցէք, որ ուշ է, շարունակեց հիւրը: Ես մի առանձին, անձնական գործով եմ գլխում ձեզ և այնպիսի դործով, որ գիշերը աւելի յարմար է ասելը քան ցերեկը: Յուսով եմ երբ լսէք ինձ, չէք զայրանալ ուշ ժամանակ ձեզ անհանգստութիւն պատճառելու համար:

Հ. Յովհաննէսը ներս տարաւ հիւրին իւր աշխատելու սենեակը:

— Իբրև Նիկողիմոս գալիս եմ ձեզ մօտ, հ. Յովհաննէս, սկսեց բժիշկը: Ինչպէս Նիկողիմոսը գիշերով գնաց Յիսուսի մօտ, որ ոչ ոք չտեսնէ, նոյն պատճառով ես էլ եկայ ձեզ մօտ գիշերով: Եւ հօգու նոյն տանջանքներով, հաւատի վերաբերեալ հարցերով, ինչպէս և Նիկողիմոսը: Վերջի ժամանակներս

* Ծանօթ. Մի զուլս «ЗАТѢНИКЪ» ճեղինակութիւնից:

ինձ սաստիկ տանջում են կրօնական մտքերը, Քլուխս ճաքեցնում եմ, բայց որոշ եղբայրացու թեան գալ ամենևին չեմ կարողանում: Մի քանի անգամ փորձեցի ձեզ մօտ գալ—ամաչեցի: Ի՞նչպէս, մտածեցի ես, ինքս լուրջ գիտնական, աղատամիտ մարդ և յանկարծ գամ մի քահանայի մօտ կրօնական զրոյցի համար: Ի՞նչ կ'մտածեն և կ'ստեն բարեկամներս և ծանօթներս:

— Զարմանալի՜ զգացմունք է այդ, հ. Յովհաննէս, գարձաւ հիւրը տանտիրոջ, խմել արբենալու չափ, ամբողջ գեշերներ լուսացնել թղթախաղով, ջահել ընկերների հետ քէֆեր անել—այդ ոչինչ, ամօթ չէ, իսկ խօսել Առաուծոյ մասին՝ ամօթ է, անյարմար: Վախենում ես որ ծաղրեն քեզ: Ահա ես գալիս եմ Ձեզ մօտ, տէր հայր, գիշերով, գաղտագողի, ուրիշներից թագուն: Բանն այն է, որ ես, ինչպէս Յիսուս ասաց Նիկոմիդոսին, ինքս ինձ վերայ փորձելով հասկացայ թէ ի՞նչ է նշանակում երկրորդ անգամ ծնուիլ, այսինքն հոգևով վերածնուիլ—սկսել նոր ներքին կեանք, նոր կերպով մտածել, նոր կերպով զգալ, նոր նպատակների ձգտել: Երբէք ես այդ մասին չէի մտածել, նոյն իսկ ամենևին մտքիս չէր եկել: Եւ եթէ մէկը սրանից մի տարի առաջ ասէր թէ ինձ հետ այդ տեսակ փոփոխութիւն կկատարուի, ես կծիծաղէի նրա երեսին: Բայց դուրս եկաւ այն, ինչ որ Յիսուս ասել էր Նիկոդիմոսին, «Հագին շնչում է, ուր կամենում է և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես ո՞րտեղից է գալիս և ո՞ւր է գնում, այսպէս է և ամեն հոգուց ծնուողը»:

— Տեսնո՞ւմ էք ես այժմ ինչպէս լաւ գիտեմ Աւետարանը, հաղիւ նկատելի ժպտով ասաց բժիշկը, իսկ քիչ առաջ չգիտէի և չէի էլ ուզում գիտենալ: Բողոքովին անսպասելի կերպով պատահեց այս բանը: Զգիտեմ յիշո՞ւմ էք արդեօք որ սրանից մի քանի ամիս առաջ մեր նահանգական դատարանի նախագահի մօտ էիք:

— Անդրէյ Ֆէոդորիչի՞ մօտ, ընդհատեց հ. Յովհաննէսը, ինչպէս չէ յիշում եմ: Նա այն ժամանակ սաստիկ ջղային հիւլանդութիւն ունէր ու ես մի քանի անգամ եղել եմ նրա մօտ:

— Ահա, ահա. շարունակեց բժիշկը: Մի անգամ նրա առանձնասենեակից դուրս գալիս ես Ձեզ պատահեցի: Ճիշտն ասած Ձեր ներկայութիւնը, տէր հայր, Անդրէյ Ֆէոդորիչի մօտ ինձ մեծ դարմանք պատճառեց: Անդրէյ Ֆէոդորիչը, ինչպէս ամենքին էլ լաւ յայտնի է, բացառիկ խելքի և հազուագիւտ ընդունակութիւնների տէր մարդ է. ըստ այնմ բազմակողմանի և փայլուն կրթութիւն ստացած:

«Ի՞նչ դործ ունի այստեղ քահանան, մտածեցի ես, Անդրէյ Ֆէոդորիչը ի՞նչ մի ընդհանուր դործ կարող է ունենալ տէր-տէրների հետ»:

— Ներեցէք, թանդագին հ. Յովհաննէս դարձաւ բժիշկը ասնտիրոջ, աստ՛մ եմ սրտաբաց ամենը, ինչ որ եղել է:

— Գուք դուրս եկաք, շարունակեց բժիշկը, ինչ ես ծիծաղելով ասացի. «Անդրէյ Ֆէոդորիչ, ի՛նչպէս է որ այդ սև ազգաւը մտել է այստեղ. մի՞թէ պատրաստուած էք մեռնել: Սպասեցէք: Մենք Ձեզ շուտով կբժշկենք և դուք կրկին դատարանում Ձեր հրաշալի ճառերով բաւականութիւն կպատճառէք մեզ:

— Ոչ թէ մեռնել, այլ ապրել եմ ուզում, հանգիստ կերպով պատասխանեց Անդրէյ Ֆէոդորիչը, դրա համար էլ հրաւիրեցի աէր հօրը: Լ. Յովհաննէսը առանձին շորհք ունի: Նրա խօսքը ինչպէս սպեղանի կակիդացնում է սիրտը, հանդուսացնում հոգիդ: Ահա ես էլ այդ դեղով բժշկում եմ ջղերու: Գուք ինձ օգնում էք Ձեր բժշկական միջոցներով, խեղ նա իւր զբոյցով:

— Հանաք էք անում, Անդրէյ Ֆէոդորիչ, երևի աէր-հայրը որ և է գործով եկած կլինի Ձեզ մօտ:

— Հարկաւ. բոյց մի՞թէ մարդու հանգստացնելը գործ չէ. լրջօրէն շարունակեց Ա. Ֆէոդորիչը. ես նայում եմ նրան և ոչինչ չեմ հասկանում, արդեօք հանաք է անում, թէ լրջօրէն է ասում:

— Ի՞նչ էք այդպէս նայում, հարցնում է Անդրէյ Ֆէոդորիչը. զարմանում էք, ոչինչ չկայ զարմանալու: Ես-հաւատացեալ եմ: Եւ այս հողի վրայ եղած զրուցատրութիւնը շատ է հանգստացնում ինձ: Ես հանգստանում եմ ականջ դնելով: Ինձ այնպէս է թւում այն փամանակ, որ կարծես թեք ես կապում ինձ, բարձրանում եմ շրջապատող միջոցների հեղձուցիչ, ծխոտ օդից դէպի վեր և թեթևակի սաւառնում եմ մաքուր և լուսաւոր եթերում:

Անդրէյ Ֆէոդորիչի խօսքերը, աւելի ևս նրա ձայնը, խօսելու եղանակը, գէմքի արաայայտութիւնը ինձ խիստ հետաքրքրեցին: Մենք նստանք բազկաթոռների վրայ դէմ առ դէմ և փոխանակ բժշկական հարց ու փորձերի, սկսեցինք զրուցել Աստուծոյ մասին:

— Ի՞նչպէս էք պատկերացնում Ձեզ Աստուծուն, հարցրի Անդրէյ Ֆէոդորիչին:

— Ես իրաւաբան եմ և այդ գուցէ ազգում է իմ հայեացքների վրայ: Ես Աստուծուն պատկերացնում եմ որպէս վկայ. վկայ իմ բոլոր գործերի, մտածումների, ցանկութիւն-

ների: Նա ամեն բան տեսնում է, ամեն ինչ գիտէ, ամեն բանի վրայ նայում է իւր մաքուր, արդարամիտ աչքով: Երբ ես ուզում եմ մի բան անել, կամ սկսում եմ որ և է բան մտածել, ասում եմ ինքս ինձ:

— Իսկ դու մտաբերում ես թէ Ո՞վ է քեզ մօտ: Զգում ես թէ ինչպէս կ'ընկայ նրան այս բանը: Զէ՞ որ երբ և իցէ դու պէտք է կանգնես նրան առաջ դէմ առ դէմ և ինչպէս պէտք է նայես այն ժամանակ քո ամբողջ կեանքի վկայել պայծառ դէմքին:

— Եւ գիտէ՞ք-դարձաւ ինձ Անդրէյ Ֆէոդորիչը, այդ շատ և շատ գործերից զսպում է ինձ, իսկ այլ շատ բաների մէջ՝ լաւ, ազնիւ բաների մէջ, ընդհակառակը, ամբասնդում է: Ես այն ժամանակ զգում եմ որ իմ հոգու վկան նայում է ինձ վրայ սիրով և այդ իսկ ինձ սյօ է տալիս արիութեամբ իմ սիրտը դնել կեանքի սեղանի վրայ՝ մարդկանց ծառայելու համար:

— Անդրէյ Ֆէոդորիչի խօսքերը սաստիկ զարմացրին ինձ, շարունակեց բժիշկը, «Աստուած վկայէ՛, վկայ թէ իմ արտաքին և թէ ներքին կեանքի, այդ լաւ է», ասացի ինքս ինձ: Միայն ինձ տարօրինակ է թւում, մի՞թէ Անդրէյ Ֆէոդորիչը հաւատում է հանդերձեալ կեանքին, ինչ որ հաշուեաութեան և հատուցման: Ես պարզապէս յայտնեցի իմ տարակուսանքը խօսակցիս:

— Երևակայեցէ՛ք, այն, ես հաւատում եմ հոնդերձեալ կեանքին: Նոյն հանգիստ, խորհուն, հաստատ ձայնով ասաց Անդրէյ Ֆէոդորիչը:

— Այսինքն ինչպէս, ընդհատեցի նրան. հաւատում էք այն բանին, որ մահուանից յետոյ դուք պիտի միանաք, ձուլուէք ընտելեան հետ՝ պիտի միանաք կրկին այն ընդհանուր սկզբի հետ, որից առ ժամանակ, որպէս անձնաւորութիւն, բաժանուել էիք:

— Այդ բնաստուածութիւն է, ասաց հիւանդս: Իսկ ես հաւատում եմ անհատական անմահութեան, հաւատում եմ այն բանին, որ ես պէտք է գոյութիւն ունենամ, որպէս Աստուծոյ ծառայ Անդրէյ, ոչ թէ ի հարկէ մարմնով, այլ հոգւով:

— Անկարելի է, կասկած յայտնեցի ես:

— Հաւատացնում եմ Զեզ:

— Շատ տարօրինակ է, շարժեցի գլուխս:

— Իսկ իմ կարծիքով աւելի տարօրինակ կ'ընկեր, եթէ այդպէս չ'ընկեր, սիսեց տաք սնալով խօսել Անդրէյ Ֆէոդորիչը:

Համաձայնեցէք, որ ներկայացնել մարդուն իւր ըստը մտքերով, զգացմունքներով, մտորումներով, պօէզիայով, արուեստով և փիլիսոփայութեամբ լոկ իրը և նիւթի ծնունդ՝ ամենաքիչը կլինէր անտրամաբանօրէն: Մարդու ոգին այնքան մեծ է և բարձր, որ չի կարելի նրան պարփակել շրջանակի մէջ: Ես դո՛նէ չեմ կարող ընդունել, որ նիւթը և հոգին միևնոյնն են: Իսկ ընդունելով այդ՝ շարունակութիւնը պարտական ես ընդունել: Մի՞թէ մարդո՞ւ հոգին, որ լուսաւորւում է այգւպիսի փայլով և լուսով՝ որ վառւած է, անկասկած, Բարձրագոյն ձեռքով, կարող է յանկարծ յաւիտեանս հանդչել: Մարդու հոգին այդ բարձրութեան հասցրած, այնպիսի լուսաւոր ոյժերից ստեղծուած, այնպիսի անգին նիւթից հիւսուած և այդ ըստը նրա համար, որ մի վայրկեան, մի կարճ ժամ վառուի իսկ յետոյ փչէ մահը և այլ ևս ո՛չինչ չմնայ. Անհաւատալի՞ է: Նիւթը, մարմնի մասերը, դրանք իսկ չեն ոչնչանում մահից յետոյ. մի ձևից կերպարանափոխւում են այլ ձևի, իսկ հոգին, որ ամեն մի մարմնից բարձրագոյնն է և կատարելագոյնը, յանկարծ ոչնչանայ: Այդ ոչնչանալը ինձ համար աւելի անհասկանալի է, քան յետագայի գոյութիւնը:

— Անդրէյ Գէորգորիչը խօսքերը և նրա ձայնի համոզիկը լինելը իմ կամքի հակառակ հրասուրբեցին ինձ: Ես արդէն ջերմ հետաքրքրւում էի խօսակցութեան նիւթ դարձած հարցերով, որոնց առաջ համարում էք առ միշտ վճռուած, այսինքն գէն ձգուած: Ես լիճում էի, հակաճառում, հաբցեր առաջարկում, համաձայնում:

— Հօ չէք հաւատում հանդերձեալ կեանքի տանջանքներին և հատուցմանը, վեր ցատկեցի ես բազիլիսթոսից և մօտեցայ նրան կուրծք կրծքի:

Անդրէյ Գէորգորիչը երկար նայեց ինձ, յետոյ աչքերը մի կողմ ածեց և վերև՝ դէպի առաստաղ նայելով ասաց.

— Ահա ի՛նչ կասեմ Ձեզ: Ես աստուածաբան չեմ և հաւատի վերաբերեալ խնդիրներում երբէք հմուտ չեմ եղել: Քրիստոնէական վարդապետութիւնը վաղուց եմ սովորել, այն էլ վառ, բերան եմ արել առանց մի բան հասկանալու. ասում եմ պարզը: Ես հաւատում եմ որ մարմնը, քանի ապրում է մարդը, ծառայում է նրան որպէս շրջանակ և որոշ չափով սահմանափակում է նրա հոգին: Մահից յետոյ այդ շրջանակը քայքայւում է և հոգին դառնում է աւելի նուրբ, այսպէս ասած, աւելի որահայեայն և թափանցող: Եւ ահա ի՛նքս ինձ մահիցս յետոյ պատկերացնում եմ այսպիսի հոգի և իմ առաջ

տարածուած լայնածաւալ քարտէզ: Այդ քարտէզը ձգուում է ամեն կողմ անծայր և չքանում է հեռաւորութեան մառախուղում: Այդ քարտէզը մարդկային կեանքի դաշան է: Նրա վրայ տեղ-տեղ համախմբուած են հազարաւոր և միլիոնաւոր մարդիկ, մի ուրիշ կողմ ցրուած են առանձին կէտեր, երբորդ տեղը-մերկ անապատներ: Քարտէզի վրայ օձապտոյտ հոսում են գետեր, գետակներ, առուակներ: Փեանի տակից խփում են աղբիւրներ, սարերից, քարերի տակից գահավիժում են վտակներ: Այդ գետակների, առուակների և աղբիւրների ջրերը միախառնուում են և թափուում ծովը, այստեղ ու այնտեղ կրկին սկսում են գեանի տակից խփել ջրերը: Նոցանից ոմանք մաքուր են, կենդանի, կենսաբեր: Աւր երևին, այնտեղ կսկսուի կեանք:—կծի խոտը, կկանաչեն աւազները, անապատը կվերափոխուի պարտիզի: Աւրիշները իրանց հետ բերում են վարակումն, հիւանդութիւն, մահ և կորուստ, հեղհեղում են արիւրը և քանդում աները, յորձանքներ են կազմում և մարդկանց խեղդում, գոյացնում են կորստաբեր մառախուղներ, որոնք և թունաւորում, վարակում են ջրերը: Դրանք քարտէզի վրայ երևացող սև ժապաւէններն են: Այդ բոլոր գետերը, գետակները, աղբիւրները մարդոց կեանքն է, կամ աւելի ճիշտը, առանձին մարդկանց գործունէութիւնը: Երկայն և լայն ժապաւէնները՝ լայն և խոր գետերն են:

Դրանք մեծ մարդկանց կեանքերն են, որոնք մարդկային կեանքի վրայ ունենում են մեծ ազդեցութիւն: Մանր ժապաւէնները՝ մանր մարդկանց կեանքն է, ինչպէս մենք Ձեզ հետ: Նայում եմ այդ քարտէզի վրայ լուսաւորուած հայեացքով և տեսնում եմ իմ գիծը: Տեսնում եմ և այն բոլորը, ինչ որ նա թողել է իր յետևից: Մէկին մշուշապատել է, մէկին վարակել թոյնով, միւսին խելապտոյտ է արել յորձանքում, էն միւսի հիմքն է քերել, քանդել: Տեսնում եմ այդ բոլորը և հասկանում, որ այդ բոլորը անուղղելի է: Արուած-կատարուած գործը չի կարելի շտկել: Գրուածը չի ջնջուիլ: Կրակը բաց ես թողել-ինքդ չես կարող հանգցնել, համաձայնեցէք որ ստակալի գրութիւն է այդ: Տիշեցէք Ռեպինի պատկերը. «Յովհան Գրոզնին իւր ձեռքով սպանած որդու դիակի վրայ»: Ի՞նչ սարսափ է պատկերացրած մարդասպան հօր դէմքին: Արպիսի՛ յուսահաութիւն նրա աչքերում: Կատարի ցասման, անմոռութեան բուպէին թշուառ հայրը սպանել է իւր որդուն: Սպանել է և սարձացել, խելքի եկել: Աւշքն է հաւաքել, ընկել դիակի վրայ: Լալիս, կոծում է, փաթաթում, բայց արդէն ուշ է: Օգնելը-արդէն ուշ է: Արպիսի՛ տանջանք, սրպիսի չարչարանք, ի՞նչ

կտար նա որքուն վերադարձնելու համար, բայց վերադարձնել անկարելի է, ինչ որ արել ես—արել:

Այդպէս ենք և մենք մեր մահից յետոյ: Աեանքը անց է կայրած, բայց որքա՞ն սպանութիւններ է տեղի ունեցել: Սպանուել են գեղեցիկ ցնորքներ. սպանուել են աղնիւ ձգտումներ, սպանուել է խիղճը, սպանուել հոգին, սպանուած է Աստուած մեր հոգու մէջ, կրկին խաչուած է Քրիստոս մեր սրտերում, ինչպէս Գողգոթայի վրայ: Իսկ միւս կողմից, կեանքի նոյն քարտէզի վրայ ես տեսնում եմ թէ ինչպէս տեղ—տեղ իմ առուակը սմանց խմացնում է իւր ջրից, միւսներին թարմացնում, դա՛վացնում, երբորդին հնարաւորութիւն տալիս իւր վրայով բեռներ անցկացնելու: Ես տեսնում եմ այդ բոլորը և ուրիշ շատ զբա նմանները և ուրախանում եմ, իմ սիրտը լուսաւորւած է, իմ հոգին զգում է անասելի բերկրութիւն: Արթէ այս բոլորը անհասկանալի է:

Ես կասէի անհասկանալի—եթէ այդ բոլորը ոչինչ լինէր:

Անդրէյ Ֆէոդորիչի խօսքերը իմ մէջ արմատական փոփոխութիւն յառաջացրին: Ես տեսայ, որ հաւատի վերաբերեալ հարցերը ոչ միայն չեն վճռուած, այլ որ ես չեմ էլ մտածել նրանց վճռելու մասին: Ես ձեռքերիս մէջ մի փոքր շուռ եմ տուել, չեմ հասկացել նրանց բարձր միտքը և մի կողմ եմ գրել՝ ասելով թէ «գատարկ» բաներ են: Իսկ դուրս է դալիս որ այդ գատարկ բաներում խորին և մեծ միտք կայ:

Հետեւեալ անգամին ինքս խօսք բաց արի Անդրէյ Ֆէոդորիչի հետ կրօնական հարցերի մասին: Իմ մէջ զօրեղ հետաքրքրութիւն շարժեցաւ, բայց ոչ մի առաջնորդող սկզբունք չունէի: Ես, ճիշտն ասած, նոյն իսկ լաւ էլ չգիտէի թէ ի՞նչ եմ ուզում—հաւատ գտնե՞լ թէ պաշտպանե՞լ իմ անհաւատութիւնը, համոզե՞լ թէ համոզուել: Ես միայն զգում էի, որ իմ հոգեկան խաղաղութիւնը, իմ անտարբերութիւնը խանդարուել է. որ ես այլ ևս չեմ կարող կանգ առնել շէմքում, այլ պէտք է առաջ դնամ: Եւ մենք երկար, շատ անգամ ժամերով զրոյց էինք անում Անդրիյ Ֆէոդորիչի հետ: Հասանք Յիսուս Քրիստոսի անձնաւարութեան, նրա Աստուածամարդութեան. արդեօք նա մարդ է թէ Աստուածամարդ:

— Այն կողմից չենք մօտենում հարցին—ասում էք ինձ Անդրէյ Ֆէոդորիչը, հարցը լուծում ենք վերջից. առանց հիմունքները քննելու լինում ենք եղբակացութեան մասին: Ստուգում ենք դումարը՝ չիմանալով դումարելիները: Մանկութեան ժամանակ մեծերից ստանում ենք հաւատ: Այդպէս են ասում մե-

ծերը և մենք հաւատում ենք: Եւ կան քաղղաւորներ, որոնք այդ հաւատը պահպանում են մինչև իրանց կեանքի վերջը: Ճիշտ որ քաղղաւոր են. «նրանի՛ նսցա, որոնք շտեռած հաւատում են» ասաց Յիսուս նրանց համար: Բայց այդ ամենքին չի յաջողում: Կեանքը շատերի այդ հաւատը թափ է տալիս, քանդում, խանգարում նրա ամբողջութիւնը, հանդստութիւնը: Հոգին՝ Թովմաս առաքեալի պէս, ուզում է մասները գնել մեկի վերջերի վրայ, տեսնելով, զգալով համոզուել: Եւ աւետարանը տալիս է նրան քուրս միջոցները: Որ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է, Աստուածամարդ է, դա եզրակացութիւնն է, մեր հաւտան գումարը: Բայց ի՛նչից կապուած է այդ գումարը՝ ահա հէնց հարցը այդ է: Այստեղ է և վճիռը: Նախանայէլը յհաւատաց, որ Փիլիպպոս գաել է Յիսուս Մեսիային:

— Նազարեթից կա՞նց է քարի քան դուրս գալ:

— Գնա՛ և տես, պատասխանեց Փիլիպպոսը:

Նախանայէլը եկաւ Յիսուսի մօտ և գործը վերջացաւ նրանով, որ նախանայէլը բացահանչեց:

— Ռաբբի, դու ես Որդի Աստուծոյ, Գու ես թագաւոր Իսրայէլի:

Սամարացի կինը չզիտէր թէ ով է նստած իր առաջ ջրհորի մօտ: Իսկ երբ Յիսուս մի քանի խօսք ասաց նրան, վերջինս հասկանալով այդ խօսքերի ոյժը և միաբը, իմացաւ որ իր առաջ նստողը սովորական մարդ չէ. գնաց և պատմեց իւր գիւղի բնակիչներին: Նրանք խնդրեցին Յիսուս Քրիստոսին մնալ իրանց մօտ: Յիսուս երկու օր մնաց, սովորեցրեց Սամարացոց և նրանցից շատերը, պատմում է Աւետարանը, հաւատացին նրան:

— Հաւատացինք ոչ թէ նրա համար, որ դու մեզ ասացիր, ասում էին նրանք Սամարացի կնոջը, այլ նրա համար, որ մենք ինքներս լսեցինք:

Մեծ չափով այդ երևում է իրանց՝ առաքեալներին վրայ:

Յիսուս քարոզում է նրանց, և նրանց աչքերի առաջ կատարում է ողորմածութեան գործեր և հրաշքներ: Աշակերտները այդ ընդրը տեսնում են և լսում. նրանք հետզհետէ ստանում են տպաւորութիւնն: Այդ տպաւորութիւնները հաւաքում են, դումարում, կազմում մի ամբողջութիւն. ի՛նչպիսի ամբողջութիւն. աշակերտները որոշում են պարզ կերպով:

— Որե՞ տեղ էք ընդունում ինձ, հարցնում է Յիսուս նրանց հետ երկարաւե հաղորդակցութիւն ունենալուց յետոյ:

— Գու ես Քրիստոս, կենդանի Աստուծոյ Որդին. ի դի-

մայ բոլոր աշակերտներն համոզուած կերպով ասում է Սիմոն-Պետրոս:

— Ահա հետեանքը՝ հիմնուած փորձերի վրայ, եզրափակեց Անդրէյ Ֆէոդորիչը. երկար ճանապարհի վերջը: Եթէ Դուք ևս ուզում էք համոզուել եզրակացութեան մէջ, այժից անցկացրէք բոլոր հիմունքները: Խորհեցէք այն բոլորի մասին, ինչ որ Յիսուս ասել է: Ձեր վրայ զգացէք Նրա կեանքը և այն ժամանակ, եթէ կամենում էք հարցրէք Ձեզ—ո՞վ է Նա: Միայն թէ այն ժամանակ այդ հարցը աւելորդ է: Քո հոգու մէջ ինքն իրան կկազմուի պատասխանը, առաքեալների պատասխանը:

— Դու ես Քրիստոս, կենդանի Աստուծոյ Որդին:

Այդ խօսակցութիւնից յետոյ ես սկսեցի Աւետարան կարգալ, շարունակեց բժիշկը. կարդացի, կարդացի, աւելի շատ մտածեցի: Առաջ էին գալիս նոր հարցեր, ծնւում նոր մտքեր: Հաւատ չկար և գեռ ևս չկայ էլ, բայց ուզում եմ հաւատալ: Թւում է թէ հաւատը մօտ է, այստեղ է. բայց դեռ ևս իմ մէջ չէ:

— Հաւատում եմ Տէր, օգնիր իմ անհաւատութեանս:

Իմ առաջնորդը, Անդրէյ Ֆէոդորիչը, այլ ևս բաւականութիւն չէր տալիս ինձ:

— Ձեր յեանից հասնել չի կարելի, հանաքով ասում էր Նա:

Ես սկսեցի ուրիշ առաջնորդ փնտրել: Անդրէյ Ֆէոդորիչը մասնացոյց արաւ Ձեզ վրայ. Նա ասում էր ինձ:

— Ես Դանտի Վիրգիլիոսի պէս անհաւատութեան դժոխքից գուրս բերի Ձեզ, օգնեցի դուրս գալ կասկածների քաւարանից և մօտեցրի լուսաւոր դրախտի, լուսաւոր հաւատի գրուններին: Աւելի առաջ տանել յանձն չեմ առնում: Փնտրեցէք մէկին, որ փոխարինէ Բէաթրիչէին:

— Կնացէք հայր Յովհաննէսի մօտ, ասաց Նա: Եւ ահա ես Ձեզ մօտ եմ իմ կասկածներով, տատանումներով: Ձէք վռնդի. չէք բարկանայ, որ զիշերով եմ եկել: Յերեկը գործերով եմ զբաղուած լինում. իսկ գիշերը «հանգստի ժամանակ» հոգիս ամենեւին հանգստութիւն չունի:

2. Յովհաննէսը վերին աստիճանի հետաքրքրուած էր այն բոլորով, ինչ որ լսել էր իր անսպասելի հիւրից: Ժամանակի ուշ լինելը մոռացուած էր յոգնածութիւնը անցած: Տէր—հայրը պատրաստ էր խօսել մինչև առաւօտ: Իւր այցելութեան անժամանակ լինելը մոռացաւ և բժիշկը: Նա մօտեցաւ հ. Յովհաննէսին և սկսեց հարցեր առաջարկել:

— Տեսնում էք, տէր հայր, Անդրէյ Ֆէոդորիչը ինձ բոլորովին յեղաշրջեց, ինձ համար շատ բան յանկարծ լուսաւորուեց

բողոքովին այլ կերպ, կարծես ես առաջ գլխի վրայ կանգնած էի, ոտքերս վեր և ամեն ինչ տեսնում էի հակառակ մտքով, իսկ այժմ կանգնեցի ուղիղ և ինքս ինձ տեսայ իսկական կերպարանքով: Կեսնքիս մէջ տեղի ունեցաւ յեղաշրջում. շատ հին բան զգուեցի է թւում ինձ, ուղեցի նորը, լաւը, լուսաւորը: Ես հասկացայ թէ ինչ է զղջումը և ուղեցի, ուզում եմ զղջալ, բայց, ներեցէք, այստեղ մի բան անհասկանալի է երևում ինձ. ինչացո՞ւ է այս պարտաւորեցուցիչ խոստովանանքը և ինչացո՞ւ քահանան: Ես զղջում եմ Աստուծոյ առաջ: Մենք երկուսով ենք-ես և Աստուած, ինչի՞ է այստեղ կողմնակի մէկը:

— Այս նրա համար եմ հարցնում, բացատրեց բժիշկը, որ տասնեւթը տարի է, ինչ ես չեմ ապաշխարել, չեմ խոստովանել, այդ մասին որ և է պահանջ չեմ գրացել և ոչ մի միտք չեմ տեսել նրանում: Ճիշտն ասած, այժմ էլ չեմ հասկանում: Բացատրեցէք ինձ, ի՞նչքա՞ն Աստուծոյ, եթէ կարելի է: Բայց զգուշացնում եմ մի բանից, բացատրեցէք, եթէ կարելի է, առանց վերացական դատողութիւնների պարզ, որոշ, ակնյայտնի. այնպէս պարզ, ինչպէս օրինակ այն, թէ պէտք է խմել, ուտել, քնել, պահպանել առողջութիւնդ-կարո՞ղ էք այդպէս:

— Կարող եմ, բարեհամբոյր ժպտով, ասոյց հ. Յովհաննէսը, պատասխանը դժուար չէ: Ահա տեսնում էք իմ առաջ աշխատելու սեղանո: Այստեղ դարսած կարգաւորած բան քիչ կայ: Պրքերը ամեն կողմ կոյտերով թափթփած, նրանց մէջ, տակն ու վրան գործնական թղթեր, նամակներ, դրոսած թերթեր: Այստեղ թափթփած են նաև դատարի ծրարներ, թղթի կտորտանքներ: Հին լրագրեր: Կան շատ կարևոր, պէտքանան բաներ, բայց կան նաև շատ աւելորդ բաներ, որոնց տեղն է կամ սեղանի տակի դամբիւղը կամ վառարանը:— Ես սովորութիւն ունիմ ամիսը մի-երկու անգամ սեղանը կարգի ձգել, բայց այնուամենայնիւ դժուար է մի անգամից դանել հարկաւորուած իրը: Իսկ երևակայեցէք որ ամբողջ տարի կարգի ձգուած չլինի սեղանը, տարին քիչ է-տասն և ութը տարի. Ի՞նչ կլինէր այս ժամանակամիջոցում սեղանի վրայ, ի՞նչպիսի թղթակոյտեր, որպիսի աղբ ու լիոշի, կշռմէիք թէ ինչպէս մօտենալ և մի բան վերցնել մի տեղից: Այդպիսի աշխատանքի սեղան է և մարդու հոգին: Մի օրուայ մէջ միայն մարդս սրբան բան է մտածում, զգում, վրդովւում: Արպիսի՞ ապաւորութիւններ են կուտակւում լուսաւոր և մութ, լաւ և վատ: Եւ այդ բոլորը հաւաքւում մի տեղ: Եթէ ժամանակ առ ժամանակ ինքը քեզ կարգի ձգես, ինքը քեզ շտաւդես, այն ժամանակ սարսափելի՞ կլինի

դրութիւնդ. այն ժամանակ անկարելի մի բան հասկանալը թէ ի՞նչ որտեղ է և ինչպո՞ւր:

Եւ ահա խոստովանանքը խղճի ստուգումն է, ներքին աշխարհի կարգաւորութիւնը. ինչ որ աւելորդ է, անպէտք, դուրս է ձգւում, իսկ ինչ պէտքահան է, մեծ-մոռացուած, կոյտերի տակ մնացած-այն առաջ է տարւում, ի ցոյց արւում, ամեն բանի վրայից սրբւում է փոշին:

— Այդ ես հասկանում եմ, ասաց բժիշկը, կարգի բերելը պէտք է, սակայն այդ ես ինքս էլ կարող եմ անել, մենակ: Այլ ևս ինչի՞ համար է մի ուրիշը մտնում, քրքրում քո հոգին, փորձիբում քո զգացմունքները. նրա ի՞նչին է հարկաւոր այդ և ի՞նչ իրաւունք ունի:

— Նրան, ուրիշին, հարկաւոր չէ. բայց Ձեզ համար անհրաժեշտ է, սկսեց հանդարտօրէն բացատրել հ. Յովհաննէսը, իսկ իրաւունք տալիս էք դուք ինքներդ: Ձէ՞ որ խոստովանանքի ժամանակ ուրիշը չի միջամտում Ձեր խղճի գործերին, այլ ինքներդ էք գալիս բաց արած հոգւով: Եւ այդ միջամտութիւնը հէնց Ձեզ է հարկաւոր: Գուք, բժիշկներդ, ինքներդ էք ձեռնամուխ լինում մարդկային կազմի մէջ. բժի, բերանի, ականջների մէջ էք մտնում, զննակող մտնում ստամոքսի մէջ: Հազիւ թէ այդ բոլորը անմնակաւնապէս Ձեզ հարկաւոր լինի: Այդ բոլորը պէտք է հիւանդի համար: Մամաւորապէս դուք, հոգեբաններդ, ի՞նչ էք անում առաջի անդամ հիւանդին քննելիս: Գուք հարց ու փորձի էք ենթարկում հիւանդին, փորձիբում էք նրա անցեալը, Ձեր հարցերով մտնում եք նրա ազգականներին, հօր ու մօր, պապի, բոլոր նախնիքների կեանքի և հոգու մէջ: Կարելի՞ է այս գէպբում ասել թէ «Ձեր ի՞նչին է պէտք այդ և ի՞նչ իրաւունք ունէք». Գուք կասէք «Հապա ի՞նչպէս կարող եմ բժշկել հիւանդին, ի՞նչ խորհուրդներ տալ, եթէ չգիտեմ նրա հոգու դրութիւնը և այդ դրութեան պատճառները: Նոյնն է և խոստովանքի ժամանակ: Գուք ինքներդ Ձեզ չէք կարող բժշկել լուսնաբուր հիւանդութեան ժամանակ հէնց այն հասարակ պատճառով որ ոչ մի բժիշկ չի կարող ինքն իրան ոչ մտիկ տալ և ոչ մուրճով թխթխկացնել: Աւելի դժուար է ինքն իրան դատելը, իւր խիղճը քննելու ժամանակ անկողմնապահ լինելը: Եւ մարդը դնում է խորհրդի, օգնութեան, իւր հոգեւոր առողջութիւնը գնահատելու նրա մօտ, ով կարող է հարկաւոր օգնութիւնն հասցնել: Ի՞նչպէս կարող էք Գուք առանց հոգեւոր բժշկի կողմից դնալ այդ գէպբում: Եւ ի՞նչպէս կարող էք օգնութիւն, բժշկութիւն սպասել, եթէ չէք յայանի Ձեր հոգու հիւանդութիւնը, չէք բաց անի Ձեր հոգու վէրքերը:

Ձէ որ մենք բոլորս էլ մեծ մասամբ քիչ ենք ճանաչում մեզ, քիչ ենք հետևում մեր ներքին կեանքին, խաբխալելով ենք առաջ դնում, այնքան հակամէտ ենք մեզ խաբելու: Ահա Գուր ինքներդ ասացիք, որ Ձեր անհուշատութիւնը կտարեալ ճշմարտութիւն էիք համարում, մինչդեռ բոլորովին ուրիշ բան դուրս եկաւ: Ինձ մօտ այս օրերս աւելի ևս պարզ օրինակ պատահեց: Գալիս է ինձ մօտ մի անչափահաս, տասն և վեց տարեկան պատանի: Խօսում է անախորժ կերպով, խռպոտ ձայնով, բարձրավիզ կոշիկ էր հագած և մահուդէ բլուզ: Կարած էր կաշուէ դօտի: Մի ձեռքը գօտուն խրած՝ միւսով ըսպէտ ըսպէ քրքրում մտղը: Տեսքը «յեղափոխականի էր»: Երբ, պ. բժիշկ, շատ մարդ ես տեսնում, թափանցում նրանց մէջ, սովորում ես արտաքսուսա ճանաչել: Այս սիրուն պատանեակի դէմքին կարծես ուղղակի գրուած էր, որ նա կարգացել է Պիտարե, Բոկլ, Գրեպէր և այդ երեք կէտերի վրայ կանգ է առել, նրանց վրայ հիմնել իւր բոլոր իմաստութիւնը, իւր բոլոր աշխարհագիտութիւնը: Այդպիսի խղճուկ պատանիներ ես շատ եմ տեսել: Մայնում է քիթը մի ծակի մէջ, ինչպէս մի քարթակ և կանգ առնում անշարժ, կարծում է ամբողջ աշխարհն այստեղ է, բոլոր իմաստութիւնը ձեռք է բերել: Ահա որանք են անհովիւ մնացած ոչխարները, որանց եմ շատ խրղճում: Մեղքս եկաւ և սրան: Մի կողմից խղճում եմ, միւս կողմից ծիծաղաղս է գալիս, այնքան է ինքն իրան բարձր պահում և ինքնավստահ:

— Ինչո՞վ կարող եմ ծառայել Ձեզ, հարցնում եմ նրան՝ հրաւիրելով նստել:

— Տեսնո՞ւմ էք, գուռոյ կերպով ոկսեց նա, իսկապէս ես Ձեզանից օչինչ չեմ ուզում. ես այնպիսի համոզմունքների աէր եմ, որպիսի համոզմունքներ ունեցող լուսուսք մարդը պէտք չի ունենալ քահանայի դիմելու:

Խիծաղելի էր նայել այդ նորեկ «լուսուսքուած» մարդուն:

— Տեսնո՞ւմ էք ընդհատում եմ ես նրան, ես ևս այս ընպէին ոչնչով չեմ կարող օգտակար լինել Ձեզ. ի հօրիէ ես ուրախ եմ Ձեզ հետ ծանօթանալով, բայց իսկապէս չգիտեմ թէ ինչո՞ւ էք նեղութիւն կրել ինձ մօտ գալու:

«Լուսուսքուած» մարդը շիտթուեց, իսկոյն իւր ինքնավստահութեան կէտը կորցրեց և իւր գալուստը անկապ կերպով այսպէս քայտարեց.

— Տեսնում էք, ես ինքս իմ կողմից չեմ եկել. եկել եմ քրոջս կողմից: Նա Ձեզ լսում է ֆելաշերական կուրսերում: Մենք յաճախ վիճում ենք նրա հետ: Նա, որպէս կին, դեռ ևս

չէ աղատուել նախապաշարուածներէց: Նա, օրինակ, առաւօտ
և երեկոյ աղօթում է: Ես ասում եմ. «ինչի՞ համար է»: Նա
պատասխանում է. «պահանջ է», իսկ բացատրել, ապացուցա-
նել չի կարողանում: Ուղարկեց Ձեզ մօտ. և ահա ես եկայ ձեզ
մօտ լսելու ի՞նչ կարող էք ասել այս մասին:

— Տեսնում էք-պատասխանում եմ նրա եղանակով, ես
նոյնպէս դործ եմ անում այն «նախապաշարուածները», ինչ որ
Ձեր քոյրը. նոյնպէս աղօթում եմ առաւօտ և երեկոյ, երբեմն
և ցերեկը:

— Բայց ի՞նչ միտք ունի, բորբոքուեց «լուսաւորուած»
մարդը. ի՞նչ ազդեցութիւն կարող է ունենալ ինձ վերայ Աս-
տուած. բնութեան մէջ գոյութիւն ունին օրէնքներ, որոնք
անփոփոխելի են. Մարդս ամբողջովին նրանց է ենթարկուում:
Այստեղ կողմնակի ազդեցութեան հնար չկայ: Ասացէք խնդ-
րեմ՝ Աստուած ի՞նչպէս պէտք է ազդէ ինձ վերայ, յաղթանա-
կօրէն վերջացրեց «լուսաւորուած» պատանեակը:

— Իսկ Գուք սրտեղ էք սովորում, երիտասարդ պարոն,
հանգարտօրէն հարցրի ես:

— Գիմնազիայում. տարակուսութեամբ պատասխանեց նա:

— Ո՞ր դասարանում էք.

— Եօթերորդում. շուտով կաւարտեմ.

— Ռուսաց գրականութիւն սովորել էք ուրեմն. Բայրոն-
նիզմի մասին. Բայրոնի ունեցած ազդեցութեան մասին Պուշ-
կինի և Լերմոնտովի վրայ:

— Ինչպէս չէ, վերաւորուած նկատեց նա:

— Իսկ դիտէ՞ք որ երաժշտութիւնը ազդում է մարդու
վրայ. պօէզիան, արուեստը—նոյնպէս. իսկ եղանակը. արև է,
լոյս և մարդիկ ուրախ են. անձրև է, մառախուղ և մարդիկ
շրջում են մռայլ: Ինչո՞ւ խօսենք եղանակի մասին: Գուք նըր-
տած էք, ասենք. և տաք խօսակցութեան բռնուած մէկի հետ
և կամ խորասուզուած էք մտորումներն մէջ. և յանկարծ ա-
քաղաղը բարձրանում է ցանկապատի վրայ և որքան ձայն ունի
կանչում: Գուք կհիասթափուէք և կպատահի կիրորցնէք Ձեր
արամադուութիւնը: Հետևապէս ոչ միայն Բայրոնը, պօէզիան,
եղանակը, այլ նոյն իսկ քաղաղը կարող է Ձեզ վերայ ազդե-
ցութիւն ունենալ, իսկ Աստուած ո՞չ:

Պատանին բոլորովին կակղեց և այլ ևս առանց բարկու-
թեան ասաց. այնուամենայնիւ ինչո՞ւ է աղօթքը. մե՞թէ Աս-
տուծուն հարկաւոր է աղօթք դէպի մեզ դարձնելու համար:

— Ոչ թէ նրան, այլ մեզ է հարկաւոր: Ոչ թէ նրան
պէտք է դէպի մեզ դարձնել, այլ մենք պէտք է աշխատենք

հասնել նրան: Գուք ահա չէք հասկանում թէ ինչո՞ւ համար է ձեր քոյրը առաւօտ-երեկոյ աղօթում: Իսկ Գուք ինչո՞ւ էք առաւօտ-երեկոյ, երբեմն նոյն իսկ ցերեկը լուանում ձեռներդ: Եթէ քոյրսո՞վին շլուանաք, կեդար կեզև կկապէ: Յետոյ ինչո՞ւ առաւօտ և երեկոյ քաց էք անում օդանոցքը կամ լուսամուաները դէպի փողոց: Ինչո՞ւ էք ամառանոց դնում: մաքուր օդ ծծում: Ինչու են բժիշկները հիւանդներին տաք երկիր օդարկում: Ո՞ւմ է հարկաւոր այդ քոյրը փողոցի՞ն, օդի՞ն, արևի՞ն թէ ձեզ: Ա՛յ որ կխեղաուէք առանց թարմ օդի: Այդպէս և աղօթքը: Կեանքը լի է գարշահոտութեամբ: Մեր մէջ ևս կան շատ ամենատեսակ հեղձուցիչ գապեր: Տարիների ընթացքում հոգու մէջ կուտակուում է շարութիւն, թշնամութիւն, նախանձ և այլ վատ գրայմունքներ: Այդ քոյրը նեխուում է և գաղ արաադրում, ներքին աշխարհիդ մթնոլորդը, հողիդ թունաւորում: Աղօթքը օգնութեան է հասնում իբրև թարմացուցիչ տարր: Մարդս գէթ մի վայրկեան բարձրանում է կեանքի ճահճից, մտանում Աստուծուն, կենարանանում իւր լուսագոյն գրայում ների վրայ, հոգու նեխուած, գարշահոտութեամբ լի սենեակից քաց է անում գուռը կամ պատուհանը դէպի սրտի սրբութիւն սրբոց, որտեղ բռնում են սիրոյ և արդարութեան մարուք ծաղիկները և որտեղից նրան հանդէպ փչում է անուշահոտութեան թարմացուցիչ հոտանքը՝ աղօթքը: Հայկաւմբ է աղօթքի այդ անուշահոտութիւնը: Յանկալի՞ է մարդուս համար աղօթանո: էք վերացումն առ Աստուած շատենք ժամերով, գէթ բուպէներով:

Պատանին լուռ էր: Կէմքը կորցրեց իր խոժոռութիւնը, դարձաւ սիրելի, հաճոցական, պարզ-մանկական:

— Ինչի՞ էք լուում. ի՞նչպէս էք ատում թէ հարկաւոր չէ աղօթել: Աղօթքը նախապաշարմունք է:

— Ներեցէ՛ք, ես չեմ մտածել, շիտթուելով պատասխանեց պատանին:

— Իմ առաջ ներսդութիւն մի՛ խնդրէք, լրջօրէն նկատեցի նրան, այլ ինքներդ Ձեր առաջ, Ձեր քրոջ առաջ, կեանքի առաջ: Մենք միշտ այդպէս ենք: Մտածելը՝ չենք մտածում, ամեն ինչ չենք հասկանում, չենք չափում, սակայն ինքնափտահութեամբ ամեն բանի ձեռնամուխ լինում, մեր գի՞նք նշանակում: Վատ գնահատողներ ենք մենք: Չգիտենք ի՞նչ և ի՞նչպէս գնահատել:

— Ահա տեսնո՞ւմ էք, պ. բժիշկ, դարձաւ հ. Յովհաննէսը հիւրին: Թողէք այդ անփորձին մենակ, անշուշտ ուղիղ ճանապարհից պէտք է շեղուի: Եւ մի՞թէ նա միայն իսկ նրանից եր-

կու, երեք, չորս անգամ մեծերը չե՞ն խըծըճւում կենսական ամենակարեւոր հարցերում:

— Գուք ասում էք խորհրդատուի, աւաջնորդի մասին, չհասկացաւ բժիշկը, իսկ ես հարցնում եմ խոստովանանքի, խոստովանածօր, մեղքերի շնորհատու թողութեան մասին:

— Հէնց դրա համար էլ ասում եմ, դրա համար էլ օրինակ բերի պատանու պատմութիւնը: Մարդս միայնակ, աւանց շնորհաց օգնութեան չի կարող բարձրանալ առ Աստուած: Մարդուս մէջ դրա համար հարկաւոր եղած բոյսերը կան, բայց նրանք չեն բացուած, չեն էլ կարող իրանք իրանց բացուել: Մարդուս հոգին սերմն է: Նրա մէջ կայ աճելու համար կենսական ոյժ, բայց այդ ոյժը կարող է բուրբոլին երեւան չգալ: Աճելու համար սերմը պահանջում է պաղարեր հող, խոնաւութիւն, լոյս և արեգակի ջերմութիւն: Եթէ սերմը չգտնէ այդ նպաստաւոր պայմանները, եթէ նա չընայ բնութեան բարեյաջող ոյժերի հանդէպ, այն ժամանակ նա պտուղ չի տալ, չի ցոյց տալ ծածկուած կենսական ոյժը, այլ կմնայ անշարժ և նոյն իսկ կարող է նեխուել: Բնութեան բարեյաջող ոյժերը գոյութիւն ունեն, նրանք միշտ պատրաստ են ծառայելու սերմին, բայց քանի սերմը ինքը չի յայտնիլ իւր պահանջը, նա չի կարող ապրել, այլ միայն կպահպանէ իւր գոյութիւնը: Այսպէս է և մարդն ու շնորհը: Աստուածային շնորհատու ոյժի լոյսն ու ջերմութիւնը զարթեցնում են մարդու հոգու մէջ «կենդանի» կեանքը, արթնացնում նրա մէջ ծածկուած ոյժերը, զօրեղացնում նրա հոգեւոր եռանդը: Բայց դրա համար հարկաւոր է, որ «սերմը» ինքը ենթարկուի շնորհատու ոյժերի ազդեցութեան, որ մարդը հոգւով շուռ դայ դէպի Աստուած, ամբողջովին ինքն իրան բաց անէ հոգւով անձնատուր լինի Աստուածային զօրութեան ներգործութեանը:

Արեգակը միշտ լուսաւորում է և ջերմացնում, մաքուր օդը միշտ և յարաժամ շնչում է երկրի վրայ բայց նրանից օգտուելու համար պէտք է բաց անենք մեր աների լուսամուտները, պէտք է հեղձուցիչ մութ սենեակներից դուրս դանք լուսաւոր և մաքուր բնդարձակութիւնը: Պէտք է Աստուծուն թոյլ տալ մտնել ըս սիրտը, պէտք է մաքրել հոգւոյ տաճարը, ինչպէս Երուսաղէմի տաճարը անասուններից և բնդունել Քրիստոսին:

— Վախենում եմ որ ձանձրացրի Ձեզ, կէս գիշերից անց է, սկսում է լուսանալ:

— Այդպէս լուսանում է և իմ մէջ, մտախոհ կերպով արտասանեց բժիշկը. յետոյ առաւ հ. Յովհաննէսի ձեռքը և ասաց.

— Շնորհակալ եմ ձեզանից, շնորհակալ: Գուր շատ և շատ օգնեցիք ինձ իմ ներքո կարգի ձգելու: Թոյլ տուէք այժմ ձեզ մօտ դալ ցերեկը, բացարձակ իսկ այժմ օրհնեցէ՛ք ինձ և թոյլ տուէք համբուրել ձեր ձեռքը՝ հովուի ձեռքը:

Թարգ. Գր. Բ. Նոր-Արեւիսան

Ս Ե Ր Գ Է Ե Ն Կ Օ

Ինչպէս է կենցաղավարում եւ աշխատում կոմս Լ. Ն. Տոլստոյը

Պ Է XIII.

Կոմսուհի Սոֆիա Անդրէեւնան վերջացրեց անային իւր բոլոր կարգադրու թիւնները և միւս ակիկներէ հետ դուրս եկաւ տան բակը:

Լեւ Նիկոլաեիչը շտապեցրեց խաղը և մի քանի բոսից յետոյ բոլոր հաւաքուածներս՝ 12 հոգի՝ ճանապարհ ընկանք դէպի մերձակայ անտառ-զբօսավայրը: Զբօսանքի ղեկավարը Լեւ Նիկոլաեիչն էր: Զառիվայրներով իջնում էինք, բարձրանում բլուրներէ վրայ, ծմակի միջով շրջաններ անում, առուակների վրայով ցատկում: Լեւ Նիկոլաեիչը ուրախ էր. աշխոյժ խօսելու տրամադիր: Դժուար տեղերում օգնում էր ակիկներին և մի ակիկնոջ համար մինչև անգամ վեր բարձրացնող մի տեսակ մեքենայ հնարեց. նա իւր ձեռովայտի մի ծայրը ամրացրեց նրա դատու մէջ և այդպիսով օգնում էր նրան վերև բարձրանալիս:

Նրբ վերջապէս դուրս եկանք մի բաց տեղ, մեր առաջ բացուեց բաւական գեղեցիկ տեսարան. խիտ առ խիտ ծառերը իրենց գեղինին տուող տերևներով հրապուրելի փայլով լուսաւորուած էին մայր մանող արևի ճառագայթներով: Տեղ տեղ որոշւում էին բարձրուղեշ՝ մութ կանաչ եղևնիներ, աւելի աչքի ընկնելով սաղարթախիտ ծառերի աշնանային ոսկեների մակերևոյթում: Ապա այցելեցինք անտառային անկտրանք, ուշադրութեամբ դիտեցինք ամեն բան և մասնք խճուղին: Լեւ Նիկոլաեիչը հետաքրքրւում էր ամեն բանով, խօսում էր բոլորի հետ, բարեկամաբար բարևում էր բոլոր հանգիպողներին, չսպասելով որ նոքա առաջ բարևեն: Ընդհանուր առմամբ անցանք մօտ 7 վերստ: Նըջագայութեան վերջում բոլորս էլ դգում էինք թեթև յոգնածութիւն և ծարաւ: